ցամաքի ափից ման գալով՝ վեր է մղում նաւակը, ճիշտ այն ձեւով ինչպէս Կուր գետի վրայ Կոլայից մինչեւ Լաքի–Շամախի–Վրացի նաւազները տանում են իրանց փայտի գերանների տոփերը:

Երկիրը, մանաւանդ գետափնեայ տափարակները հրաշալի կերպով ողողուում եւ ընտիր տղմով ծածկուում են հեղեղների բարձունքից բերած փտութիւններով, ողողում են բնական բազմազան առուներով, որոնք սահում են պարտէզների, այգիների եւ անտառների ստուերի տակով. բայց ցաւալի է, որ սրընթաց գետի հոսանքը բերած տղմի մեծագոյն մասը տանում լցնում է ծովը եւ ընդարձակում դելտան: Բնակչութեան արհեստականապէս չինած պատուարները անզօր են կռուելու գետի հոսանքի դէմ, միայն այնքան առատ է ջուրը ու տիղմը, որ սրանց բաժինը միշտ մնում է:

Երկնամերձ բարձր լեռներով, անդընդախոր ձորերով եւ այլազան լանջերով այս երկիրը կլիմայական ներհակ ծայրեր է կազմում: Սկսած Բաթումից մինչեւ Բորչիխա, Արդվին, Ծրիա, Խալխալ, Խեճոր եւ Պալխար մշտադալար անտառներ, պտղաբեր ծառեր ունի Ճորոխի այս երկար ձորը. իսկ սրանց բարձունքը, լեռների կատարները երբեմն ծածկուում են մի–երկու ամսով սպիտակ ձիւնով: Պալխարից մինչեւ Ճորոխի ակունքը՝ Զրմեսը աւելի խիստ կլիմայ ունի,